ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ԼՍԱՐԱՆ Է ԱՆՎԱՆԱԿՈՉՎԵԼ ՓԱՍՏԱԲԱՆ ՏԻԳՐԱՆ ՏԵՐ-ԵՍԱՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ

17.07.2017 17:53

Հուլիսի 17-ին ՀՀ փաստաբանների պալատում կազմակերպվել էր
Փաստաբանների միջազգային միության նախագահ Տիգրան Տեր Եսայանի մահվան տարելիցին նվիրված հիշատակի միջոցառում: Միջոցառումն իրականացել է Տեր-Եսայանի ընտանիքի անմիջական մասնակցությամբ: Նրա անվամբ է անվանակոչվել ՀՀ փաստաբանական դպրոցի երեք լսարաններից մեկը:
Հիշատակի միջոցառումը սկսվել է մեկ րոպե լռությամբ: Բացման խոսքով հանդես է եկել ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը՝ համառոտ ներկայացնելով Տիգրան Տեր-Եսայանի կենսագրությունն ու անցած ուղին: Փաստաբանների պալատի նախագահը, բնութագրելով Տիգրան Տեր Եսայանին, նշել է որ նա պրոֆեսիոնալ էր, համարձակ և լավ մարդ: Անդրադառնալով լսարանի անվանակոչմանը՝ Արա Զոհրաբյանը նշել է, որ այդ քայլով նպատակ է դրվում, որ ապագա սերունդները ճանաչեն Տիգրան Տեր-Եսայանին և ընդհանրապես փաստաբանության զարգացման պատմությունն իմանան:
Պալատի Մեծ դահլիճում ցուցադրվել է Ա1 պլյուս հեռուստաընկերության կողմից պատրաստված հիշատակի ֆիլմը, որտեղ ներկայացված է Տիգրան Տեր-Եսայանի մասնագիտական, մարդկային կերպարը: Ֆիլմում հարցազրույցների տեսքով ընկերները, մտերիմները, գործընկերները նրան հիշում են որպես ընկերասեր, մարդու իրավունքները օրենքից վեր դասող և չափազանց հումորով մարդու:
Հիշատակի ֆիլմից հետո նրա մասին խոսել են Երևան քաղաքի ավագանու անդամ, փաստաբան Զարուհի Փոստանջյանը և իրավապաշտպան Ավետիք Իշխանյանը: Փոստանջյանի հուշերում Տեր-Եսայանը պատկերվել է որպես ժողովրդավարական արժեքների ներդրման համար մարտնչող կերպար, ինչպես նաև նոր սերունդներին համարձակություն ներշնչող, կազմակերպչական բարձր ունակություններ դրսևորող ղեկավար և ավագ ընկեր, ումից կարելի էր մշտապես նոր բան սովորել: Ավետիք Իշխանյանը նշել է, որ Տեր-Եսայանն անփոխարինելի ընկեր էր և բացառիկ մարդ:
Տիգրան Տեր-Եսայանի մարդկային և մասնագիտական հատկանիշներին է անդրադարձել նաև փաստաբան Միշա Փիլիպոսյանն, ով ժամանակին եղել է ՀՀ փաստաբանների միության նախագահ: Նա ներկայացրել է Անկախ Հայաստանում փաստաբանական համայնքի ձևավորմանն առնչվող որոշ հարցեր, մասնավորապես՝ տարբեր միությունների ստեղծման, Տիգրան Տեր-Եսայանի ջանքերով դրանց միավորման կարևորությանը վերաբերող դրվագներ:
Միջոցառման մասնակիցները ներկա են եղել նաև ՀՀ Փաստաբանական դպրոցում Տիգրան Տեր-Եսայանի անվան լսարանի բացման հանդիսավոր արարողությանը, որը ուղեկցվել է փաստաբան Ալինա Ենգոյանի՝ Կոմիտասյան քառյակների կատարմամբ:

Տեղեկանք

Փաստաբան Տիգրան Տեր-Եսայան
23.04.1963թ. – հուլիս 2016թ.
Փաստաբան Տիգրան Տեր-Եսայանը ծնվել է 23.04.1963 թվականին, Երևան քաղաքում:
Տիգրան Տեր-Եսայանը 1999 թվականի մարտից զբաղվել է փաստաբանական գործունեությամբ:
1999 թվականին Հայաստանում տեղի ունեցած դատաիրավական բարեփոխումների արդյունքում հիսուն փաստաբանների կողմից Տիգրան Տեր-Եսայանի նախաձեռնությամբ հիմնադրվել է Հայ փաստաբանների միջազգային միությունը:
Հայաստանում փաստաբանական ինստիտուտի հզորացման նպատակով Հայ փաստաբանների միջազգային միությունը 2002 թվականի մարտին միացել է Փաստաբանների միջազգային միությանը, իսկ Տիգրան Տեր-Եսայանն ընդհանուր ժողովի որոշմամբ ընտրվել է Փաստաբանների միջազգային միության նախագահ:
2005 թվականի հոկտեմբերին Փաստաբանների միջազգային միության և Հայաստանի Հանրապետության փաստաբանների միության միաձուլման արդյունքում ստեղծվել է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը՝ որպես փաստաբանների անկախ և ինքնակառավարվող մասնագիտական միասնական կառույց:
Տիգրան Տեր-Եսայանն անգնահատելի դերակատարում է ունեցել Հայաստանում փաստաբանության զարգացման հարցում: Նա հանդիսանում է Հայաստանում ազատ, անկախ և համարձակ մտածողություն ունեցող փաստաբանի կերպարը կերտողներից մեկը: Տիգրան Տեր-Եսայանը՝ լինելով նաև երիտասարդության ջատագով, դեռևս 1999 թվականին համախմբել է երիտասարդ փաստաբաններին, աջակցելով նրանց մասնագիտական դաշտում ինտեգրվելու գործընթացում: Տիգրան Տեր-Եսայանը նաև նյութական աջակցություն է ցուցաբերել Հայաստանի փաստաբանությանը, մասնավորապես՝ տարիներ շարունակ անհատույց օգտագործման պայմանով Հայ փաստաբանների միջազգային միությանն ապահովել է հագեցած վարչական շենքով, ինչպես նաև նյութատեխնիկական միջոցներով:
Փաստաբան Տիգրան Տեր-Եսայանը մահացել է 2016 թվականի հուլիսին:

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA


ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

HILFIGER
ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



Փաստաբան
Տիգրան Տեր-Եսայանի
անվան լսարան II
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

Փաստաբան
Տիգրան Տեր-Եսայանի
անվան լսարան II

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })